ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Տիգրան Չանդոյան[1]

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *քրդեր, ազգային շարժում, էթնիկ սահմաններ, էթնոնիմ, զազաներ, կուրմանջի, սորանի:*

Քրդական ազգային շարժումը, որպես տարածաշրջանային քաղաքական գործոն, ի հայտ եկավ 19-րդ դարի վերջում: Առ այսօր ուսումնասիրողների շրջանում դեռևս գոյություն չունի միասնական մոտեցում դրան առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ: Քրդստան[2] էթնոքաղաքական տարածաշրջանի բաժանվածությունը չորս պետությունների միջև առաջ է բերել միմյանցից տարբեր, իսկ երբեմն էլ իրար հակընդդեմ նպատակներ ունեցող և տարբեր փուլերում գտնվող շարժումներ, և այս համատեքստում քրդական ազգայնականության մասին խոսելիս ցարդ անհրաժեշտություն է առաջանում նախապես հստակեցնել հիմնահարցի հետևյալ երեք բաղադրիչները.

1. էթնիկ բաղադրիչը, կամ ո՞վ է քուրդը.
2. աշխարհաքաղաքական բաղադրիչը, կամ ո՞ր տարածաշրջանն է ուսումնասիրման առարկա.
3. նպատակային բաղադրիչը, կամ ո՞րն է տվյալ տարածքում քրդական ազգայնական շարժման նպատակը (մշակութային

[1] ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրանտ, ՀՀ ԳԱԱ Ասպիրանտ

[2] Քրդստան կամ Քուրդիստան անվանումը խիստ պայմանական է. այն այստեղ կիրառվում է՝ նշելու համար ժամանակակից Թուրքիայի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Սիրիայի Արաբական Հանրապետության և Իրաքի Հանրապետության պատմականորեն քրդաբնակ շրջանները:

ինքնավարություն, լայն ինքնավարություն, դաշնային կառավարման համակարգի ներդնում, անկախություն, և այլն):

Այստեղ կքննարկենք Թուրքիայի Հանրապետության տարածքում քրդական էթնիկ ինքնության ընկալումների և դրանց սահմանների որոշ հարցեր:

Որևէ էթնիկ խումբ (ժողովուրդ կամ ազգ) սահմանելու հիմքում առկա է սոցիալական և քաղաքական գործընթացների ամբողջություն: Այս առումով ընդունելի է հետևյալ տեսակետը[3], ըստ որի՝ հարկավոր է պատասխանել ոչ թե այն հարցին, թե *ինչ* է էթնիկ խումբը, այլ *երբ* և ինչպիսի պայմանների առկայությամբ է այն գոյում: Կրելով մի շարք գործոնների ազդեցությունը, որոնք բոլորն էլ «փխրուն» են, փոփոխական և կայուն չեն, քաղաքագիտության տիրույթում էթնիկ պատկանելությունը պետք է դիտվի որպես ճկուն հասկացություն՝ առանց կարծր չափորոշիչների:

Գոյություն ունեն էթնիկ պատկանելության երեք հիմնարար հայեցակետեր.

1. ներհայեցողական, այսինքն՝ էթնիկ խմբի ներքին տեսակետը սեփական էթնիկ խմբի և դրա ներկայացուցիչների վերաբերյալ[4],
2. ընդհանուր կամ էթիկ, այսինքն՝ էթնիկ խմբից դուրս գտնվողների տեսակետը տվյալ էթնիկ խմբի վերաբերյալ[5],
3. միջնորդված, որը նախորդ երկու ասպեկտների միջև հաստատված հավասարակշռությունն է[6]:

---

[3] "Introduction", in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, p. 19.

[4] Անգլիալեզու գիտական գրականության մեջ կիրառվում է emic եզրույթը, որի ներքո հասկացվում է որոշակի լեզվի կամ մշակույթի ուսումնասիրության կամ նկարագրության մոտեցում՝ ըստ դրա ներքին տարրերի և դրանց գործառության:

[5] Անգլիալեզու գիտական գրականության մեջ կիրառվում է etic եզրույթը:

[6] "Introduction", in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, pp. 19-20.

Ինքնասահմանումը ինքնին հաստատուն չէ, և դրա մակարդակների մի ամբողջություն կարելի է նախնականորեն տարբերակել ըստ շեշտադրման, օրինակ՝

ա. անխուսափելի ինքնորոշում,

բ. կանխամտածված ինքնորոշում,

գ. կաշկանդված ինքնորոշում[7]:

Սրանցից յուրաքանչյուրը գործում է բնորոշ հիմնավորումների միջոցով: Այսպիսով, անխուսափելի ինքնորոշումը կարող է պայմանավորված լինել հետևյալ հանգամանքներով.

ա. Համոզմունքով, որը խարսխված է փոքրամասնության կրոնական հավատալիքների վրա, բացառվում են խառնամուսնություններն այլ դավանանք կրողների հետ: Օրինակ՝ եզդիների դեպքում. վերջիններիս համար էնդոգամիան էթնիկ ինքնորոշման առաջնային բաղադրիչներից մեկն է:

բ. Պարտադրանքով, որն առաջանում է հակադրման արդյունքում, ինչից խումբը չի կարողացել խուսափել:

գ. ավանդույթով, ըստ որի էթնիկ խումբը, որ այլ էթնիկ մեծամասնության հետ կիսում է որևէ ընդհանուր կատեգորիա (լեզու, կրոն, սոցիալական կառուցվածք և այլն), այդ էթնիկ մեծամասնությունից տարբերակվում է դավանական, զբաղմունքային և բնակատեղակայման համակցությամբ: վերջինիս օրինակը, Թուրքիայի Հանրապետության քրդերի պարագայում, մուսուլմանական միջավայրում հակադրվելով սուննի թուրք մուսուլմանների մոտ գերակշռող հանիֆիական մազհաբի՝ սուննի իսլամի շաֆիի մազհաբին հետևելն է, իսկ քրդական միջավայրում՝

[7] Ibid. p. 20.

սուննի քրդերին ի հակադրություն շիիզմին դավանելն է[8]՝ ի դեմս ալևիականության (ալևի քրդերի և զազաների պարագայում):

Կանխորոշված ինքնորոշումը կարող է ի հայտ գալ, երբ էթնիկ խումբը ձգտում է ընդգծել իր ինքնությունը որպես հակազդեցություն՝ ընկալվող արտաքին սպառնալիքին: Թուրքիայի Հանրապետությունում սա դրսևորվել է հիմնականում երկու ուղղությամբ՝ կրոնական, և քաղաքական: Կրոնական դրսևորման մասին արդեն խոսվեց: Քաղաքական ուղղությունը, թուրքերից բացի, մյուս էթնիկ միավորների միջավայրում տարածված ձախ շարժումներն են:

Կաշկանդված ինքնորոշումը կարող է նաև դրսևորվել՝

ա. Մշակութային առանձնահատկությունների ժառանգականությամբ, որով էթնիկ խումբը տարբերվում է մեծամասնությունից, թեև վերջինի հետ ունի այլ ընդհանրություններ. Օրինակ՝ լեզուն ալևի զազաների միջավայրում, որտեղ կան նաև ալևի քրդախոսներ և թուրքախոսներ:

բ. Սովորույթով, որով մեծամասնությունից քիչ տարբերվող խումբը սովորաբար պահպանում է իր էթնիկ խմբին բնորոշ և մյուսներից տարբերող մշակութային հստակ առանձնահատկությունները. օրինակ՝ ցեղային (աշիրեթային) սոցիալական կառուցվածքը[9]:

Խմբային ինքնությունը ճանաչելի է հիմնականում լեզվով, կրոնով և ցեղային կազմակերպություններով կամ, առնվազն, տվյալ էթնիկ խմբի ներկայացուցիչների՝ ընդհանուր ծագում ունենալու վերաբերյալ համոզմունքով[10]: Զբաղմունքը սովորաբար առանձին վերցրած տարբերակիչ գործոն չէ, սակայն կարող է արդյունավետ

[8] “Introduction”, in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, pp. 20-21.
[9] “Introduction”, in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, p. 21.
[10] Ibid. p. 21.

լինել հիմնական գործոններից մեկի կամ մի քանիսի հետ համատեղ[11]: Դրանք կարելի է տեսնել տարբեր համակցություններում:

Այսպիսով՝ Թուրքիայի Հանրապետությունում էթնիկ-աշխարհագրական սահմանների համատեքստում էթնիկ խումբը կարող է պահպանել իր ինքնությունը հետևյալ գործոնների միջոցով.

1. Լեզվով, սակայն ոչ կրոնով, օրինակ՝ սուննի զազաները:
2. Լեզվով և ցեղային կազմակերպությամբ, բայց ոչ կրոնով, օրինակ՝ ալևի զազաները:
3. Կրոնով, բայց ոչ լեզվով, օրինակ՝ եզդիները:
4. կրոնով և ցեղային կազմակերպությամբ, օրինակ՝ ալևի քրդերը:
5. կրոնով և լեզվով, սակայն ոչ ցեղային կազմակերպվածությամբ, օրինակ՝ հայերը, ասորիները և այլն:
6. կրոնով, լեզվով և ցեղային կազմակերպությամբ, օրինակ՝ սուննի քրդերը:
7. ցեղային կազմակերպությամբ, սակայն ոչ լեզվով կամ կրոնով, օրինակ՝ յուրյուքները:

Որոշ դեպքերում լեզուն և կրոնը կարող են ինքնին էթնիկ տարբերակիչ չլինել, ինչպես չերքեզների պարագայում է[12]: Հատկապես լեզուն կարող է առանձնապես կարևոր չլինել՝ ի տարբերություն ավելի քիչ չափելի մշակութային հատկանիշների:

Այնուամենայնիվ, լեզուն և կրոնն ակնհայտորեն էթնիկ տարբերության արտաքին և տեսանելի կողմերն են և հաճախ

[11] Զբաղմունքով պայմանավորված՝ նախորդ դարում տարբերակվում էին գնչուների որոշ խմբեր, որոնք ճանաչված էին որպես թափառական մաղագործներ, զամբյուղագործներ, սակայն սա էթնիկ պատկանելության ընդհանուր կամ էթիկ հայեցակետի դրսևորում է:

[12] "Introduction", in P.A. Andrews, Ethnic groups in the Republic ofTurkey. Wiesbaden: Reichert, pp. 21-22.

սոցիալական մեխանիզմների կարևոր մաս, որոնց միջոցով պահպանվում է էթնիկ ինքնությունը և դիմադրում ուծացմանը: Որոշ դեպքերում այս մեխանիզմներից մեկը կամ մյուսն ընտրվում են միտումնավոր կամ ընդհանուր համաձայնությամբ՝ ինքնության պահպանման համար: Օրինակ՝ Թուրքիայի Հանրապետության քրդերի մեծ մասը, ինչպես ասվեց վերևում, սուննի է՝ շաֆիիական մազհաբի հետևորդ՝ ի տարբերություն մեծամասնական հանեֆիական մազհաբի, և սա բնորոշիչ է դարձել այնքանով, որ որևէ մեկի մազհաբի վերաբերյալ հարցումը կարող է լինել էթնիկ ծագման ճշտման կողմնակի մեթոդ[13]: Որոշ քրդեր ընդունել են ալևիականություն և հեռացել մեծամասնության մշակույթից: Փաստեր կան, որ Դերսիմում որոշ հայեր ալևիականություն են ընդունել, որպեսզի պահպանեն իրենց ինքնությունը՝ քողարկելու համար իրենց ազգությունը[14]:

Հարկ է նշել, որ ժամանակի ընթացքում «քուրդ» էթնոնիմի նշանակությունն ու սահմանները զգալի փոփոխությունների են ենթարկվել: Գրեթե այն իմաստով, որով այն կիրառվում է այսօր, «քուրդ» անվանումը օսմանյան պատմագրության և վարչական փաստաթղթերում սկսել է գործածվել 16-րդ դարից սկսած: 16-րդ դարի Բիթլիսի քուրդ կառավարիչ, պատմագիր Շարաֆխան Բիթլիսին քրդական իշխանական ընտանիքների և աշիրեթների մասին պատմող իր հայտնի «Շարաֆնամե» աշխատության մեջ (1597 թ.) որպես քուրդ է ներկայացնում միայն քրդական ցեղերի կազմում ընդգրկված քոչվոր կամ արդեն նստակյացության անցած էթնիկ միավորներին՝ հաշվի չառնելով վերջիններիս լեզվական և

[13] Տե՛ս Martin van Bruinessen in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, pp. 613-621.
[14] "Introduction", in P.A. Andrews, Ethnic groups in the Republic of Turkey. Wiesbaden: Reichert, pp. 21-22.

դավանաբանական առանձնահատկությունները[15]: Բիթլիսիի հիշատակած քրդական աշիրեթների ցանկում ներառված էին զազայական աշիրեթները, որոնք քրդախոս չէին, և եզդիական աշիրեթներ, որոնք իսլամադավան չէին: Բիթլիսին քրդական աշիրեթների ցանկում ներառում էր նաև այնպիսի իրանական էթնիկ խմբեր, ինչպիսիք են այդ ժամանակաշրջանում դեռևս քոչվորական կենցաղ վարող լոռերը (լուրիներ) և գուրանները: Այսպիսով՝ ըստ Շարաֆխան Բիթլիսիի՝ քուրդ համարվելու առաջնային նախապայմանը ցեղային՝ աշիրեթային սոցիալական կառուցվածքն էր[16]: Բիթլիսին քրդերին հստակորեն տարանջատում էր օսմանցիներից, պարսիկներից, արաբներից, հայերից և ասորիներից: «Շարաֆնամեում» որպես քուրդ ներկայացված էին քաղաքային և ցեղային ազնվականության ներկայացուցիչները: Այս կամ այն աշիրեթի ենթակայության տակ գտնվող հողագործները, գյուղացիները, անկախ դավանանքից և լեզվից, քուրդ չէին համարվում:

Թուրք պատմագիր, ճանապարհորդ Էվլիյա Չելեբին, ով 17-րդ դարի կեսերին բազմիցս ճանապարհորդել է Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջաններում, նույնպես խոսում է քրդերի մասին՝ որպես հստակ արտահայտված առանձին ժողովրդի: Նա իր ուղեգրություններում հիշատակում է բազում աշիրեթներ ու քրդերենի բարբառային խմբեր՝ դարձյալ քուրդ համարելով զազայական, ալևիական և եզդիական աշիրեթների

[15] Philip G. Kreyenbroek and Stefan Sperl (eds), The Kurds: a contemporary overview. London: Routledge,1992, Martin van Bruinessen, Kurdish society, nationalism and ethnicity, refugee problems, pp. 38-39.

[16] Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. I, перевод, предисловие, примечания и приложения В. И. Васильевой, М. 1967, стр. 37.

ներկայացուցիչներին[17]: Էվլիա Չելեբին ևս քուրդ լինելու էթնիկ պայմանավորիչ է համարում ցեղային կառույցի առկայությունը:

Քուրդ ժողովրդի մեծամասնության ինքնության հիմքը կազմում են երկու առաջնային բաղադրիչներ՝ լեզուն և կրոնը: Այդուհանդերձ, ոչ բոլոր քրդերն են նույն դավանքի կրողներ, և ոչ բոլոր՝ իրենց քուրդ համարողներն են նույնալեզու: Քրդական հանրույթը լեզվական և կրոնական տեսակետից դեռևս բազմաշերտ է ոչ միասեռ, ինչն էլ էթնիկ հիմնախնդրի բարդությունների հիմնական աղբյուրն է:

Քրդերը խոսում են իրանական լեզուների բազմաթիվ բարբառներով և խոսվածքներով, որոնք հաճախ կարող են անհասկանալի կամ դժվար հասկանալի լինել միմյանցից հեռու տարածաշրջաններում բնակվող երկու քրդի համար: Քրդերենի երեք հիմնական բարբառները բաժանվում են հյուսիսային (կուրմանջի), կենտրոնական (սորանի) և հարավային բարբառների[18]: Կուրմանջի բարբառը խոսակցական լեզու է Թուրքիայի, Իրաքյան Քրդստանի հյուսիսային հատվածների և Իրանի քրդերի մի մասի համար: Սորանին տարածված է Իրաքյան Քրդստանի կենտրոնական և հարավային հատվածներում, Իրանի քրդաբնակ շրջաններում: Հարավքրդական բարբառներով խոսում են Իրաքյան Քրդստանի և Իրանի քրդաբնակ որոշ շրջաններում[19]:

Բացի այս երեք բարբառախմբերից՝ քուրդ ժողովրդի մի մասը խոսում է նաև հյուսիսարևմտյան իրանական երկու այլ լեզուներով՝ զազայերեն (զազակի) և գորաներեն (գորանի կամ հավրամանի) լեզուներով: Զազայախոսները տարածված են Թուրքիայի

[17] Philip G. Kreyenbroek and Stefan Sperl (eds), The Kurds: a contemporary overview. London: Routledge,1992, Martin van Bruinessen, ‘Kurdish society, nationalism and ethnicity, refugee problems’, p. 38.
[18] D.N. MacKenzie, “The Origins of Kurdish”, Transactions of the Philological Society, 1961, 68-86.
[19] https://iranicaonline.org/articles/kurdish-language-i. վերջին այցելություն՝ 15.11.2022 թ.:

Հնարապետության Դերսիմի շրջանում, ինչպես նաև Դիարբեքիրի արևմտյան հատվածում: Գորանին, որը դրա ամենատարածված բարբառներից մեկի անունով կոչվում է նաև հավրամանի, որպես խոսակցական լեզու օգտագործվում է Իրանի Քերմանշահ և Իրաքի Մոսուլ քաղաքներում և դրանց շրջակայքում[20]:

Չնայած առկա լեզվական և մշակութային տարբերություններին՝ զազայախոսներն ու գորանախոսներն իրենց համարում են քրդեր, և որպես այդպիսին ընդունվում են նաև իրենց շրջապատող քրդախոսների կողմից: Այս հարցը ևս տարակարծությունների տեղիք տվող հարցերից մեկն է թե՛ ուսումնասիրողների շրջանում, և թե՛ այս էթնիկ խմբերի որոշ ներկայացուցիչների կողմից: Այն, որ զազայերենը առանձին լեզու է, այլ ոչ թե քրդերենի բարբառներից մեկը, ինչպես որ փորձ է կատարվում ներկայացնել քրդական ազգայնական շրջանակների կողմից, ապացուցված[21] է, և այս փաստը զազայության՝ որպես առանձին ինքնության կողմնակիցների հիմական կռվաններից մեկն է: Մյուս կռվանը զազայախոս հանրույթի ոչ քրդական ծագում ունենալու հանգամանքն է, ինչը պատմական հենք է համարվում զազաներին որպես առանձին էթնիկ միավոր ընդունողների կողմից[22]:

Այսպիսով՝ քրդական էթնոաշխարհագրական սահմանները զգալի փոփոխություններ են կրել քրդական էթնոգենեզի ընթացքում, ինչը պայմանավորված է քաղաքական գործընթացներով: Ի տարբերություն 16-17-րդ դարերի՝ արդի քրդական ազգայնականության հիմքում լեզվական, կրոնական և

[20] https://iranicaonline.org/articles/gurani. վերջին այցելություն՝ 15.11.2022 թ.:
[21] D.N. MacKenzie, “The Origins of Kurdish”, Transactions of the Philological Society, 1961, 68-86.
[22] Զազաների էթնոնիմներից մեկը՝ դեյլեմի, հուշում է վերջիններիս՝ կասպյան դեյլեմի (հայ մատենագրության մեջ հիշատակվում է դլմիկ ձևով) ցեղախմբերից ծագելու մասին: Այս մասին տես նաև՝ Անդրանիկ, Տերսիմ. ճանապարհորդութիւն եւ տեղագրութիւն, Թիֆլիս, 1900:

մշակութային տարնմանությունները պայմանավորիչ չեն Թուրքիայի Հանրապետության տարածքում քրդական ազգայնականության էթնո-աշխարհագրական սահմանների ձևավորման համար:

ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY

Tigran Chandoyan

(Summary)

The Kurdish national movement emerged as a regional political factor at the end of the 19th century. The division of the Kurdistan between four states has given rise to movements with different, and sometimes contradictory goals in different stages, and it is necessary to specify in advance a number of components of the issue when talking about Kurdish nationalism, the most important of which, perhaps, is the question “who is a Kurd”?

Group identity is identified primarily by language, religion, and tribal organization, or at least by the belief that members of a given ethnic group share a common ancestry.

Over time, the meaning of "Kurd" has undergone significant changes. The name "Kurd" in its current sense has been used since the 16th century. Sharafkhan Bitlis in his famous work "Sharafname" presents as Kurds only the nomadic or sedentary ethnic units included in the Kurdish tribes, without taking into account their linguistic and religious characteristics. The list of Kurdish tribes also included such Iranian ethnic groups as the Lori and Gurans. Traveller and historian Evlia Çelebi also considers the existence of a tribal structure to be an ethnic condition of being a Kurd.

For most of the Kurdish people, self-determination is based on language and religion. However, not all Kurds share the same religion and language. The Kurdish community still remains heterogeneous and multi-layered. In addition to the three most common dialects of Kurdish, a part of the people who consider themselves Kurdish speaks Zazai and Goran, which have been proven to be separate languages from Kurdish.

Thus, in contrast to the 16th-17th centuries, the linguistic, religious and cultural differences at the basis of modern Kurdish nationalism are not a condition for the formation of ethno-geographic boundaries of Kurdish nationalism in the territory of the Republic of Turkey.

ЭТНО-ГЕОГРАФИЧЕСКИЕ ГРАНИЦЫ КУРДСКОЙ НАЦИОНАЛЬНОСТИ НА ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ ТУРЦИЯ

Тигран Чандоян

(Резюме)

Курдское национальное движение возникло как региональный политический фактор в конце XIX века. Разделение этнополитического региона Курдистана между четырьмя государствами породило движения с разными, а порой и противоречивыми целями и на разных этапах, и в этом контексте, говоря о курдском национализме, необходимо заранее указать ряд моментов. составляющие вопроса, важнейшая из которых, пожалуй, этническая, есть составляющая, или ответ на вопрос, кто такой курд?

Групповая идентичность определяется прежде всего языком, религией и племенной организацией или, по крайней мере, верой в то, что члены данной этнической группы имеют общее происхождение. Со временем значение и границы этнонима «курдский» претерпели значительные изменения. Название «курд» в его нынешнем значении используется с 16-го века. Шарафхан Битлиси в своем известном труде «Шарафнаме» представляет курдами лишь кочевые или оседлые этнические единицы, входящие в состав курдских племен, без учета их языковых и религиозных особенностей. например, в список курдских племен входили и такие иранские этносы, как лори и гураны. Путешественник и историк Эвлия Челеби также считает наличие племенной структуры этническим условием курда.

Для большинства курдов самоопределение основано на языке и религии. Однако не все курды исповедуют одну и ту же религию и язык. Курдская община по-прежнему остается неоднородной и многослойной. Помимо двух наиболее распространенных диалектов курдского языка, часть людей, считающих себя курдами, говорит на зазайском и горанском языках, которые, как доказано, являются отдельными языками от курдского.

Таким образом, в отличие от XVI-XVII вв языковые, религиозные и культурные различия, лежащие в основе современного курдского национализма, не являются условием формирования этногеографических границ курдского национализма на территории Турецкой Республики.